



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

«Պատմական հուշարձանների և կուլտուրական մյուս արժեքների պահպանության նկատմամբ հոգատարությունը Հայկական ՍՍՀ քաղաքացիների պարտքն ու պարտականությունն է»:
(ՀՍՍՀ սահմանադրություն, հոդված 66)

Համալիրի ընդհանուր տեսքը հարավ արևմուտքից



Ս. Աստվածածին եկեղեցու ներքին հորինվածքը

Նոր Վարագավանքի ճարտարապետական համալիրը զարգացած միջնադարի հայկական մեծարժեք հուշարձանախմբերից է: Այն գտնվում է ՀՍՍՀ Շոտլադինի շրջանի Վարագավան (մինչև 1978 թ.՝ Հախում) գյուղից մոտ 3,5 կմ հարավ-արևմուտք, անտառապատ սարերով ու գեղատեսիլ ձորերով շրջապատված բարձրադիր փոքրիկ բացատում:

XII—XIII դարերում կազմավորված համալիրը ոչ հեռու գտնվող Նոր Բերդի տիրակալներ Կյուրիկյանների շինարարական գործունեության արգասիքն է: Վանքը եղել է եպիսկոպոսանիստ և կարևոր դեր է խաղացել ժամանակի հոգևոր կյանքում: Այնտեղ է իր գործունեությունը ծավալել XIII դարի անվանի կրոնական և մշակութային գործիչ Հովհաննես Տուեցին: XIX դարում վանքի առաջնորդն էր Գրիգոր Մանուչարյանը, որը 1804—1828 թթ. իր կամավորական ջոկատով ակտիվ մասնակցություն է ունեցել Արևելյան Հայաստանի ազատագրման գործում:


XII—XIII դարերի ազբյուրներում հուշարձանախումբը հիշատակվում է Անապատ անունով: Հետագայում ստացած Նոր Վարագավանք անվանումը հայ ժողովրդի պատմության ծանր ժամանակներից մեկի վկայությունն է: Մոնղոլական արշավանքների հետևանքով Վասպուրականի ավերված Վարագավանքի վանահայր Ղուկասը փախչում է այնտեղից՝ իր հետ ունենալով «Ս. Նշանը» (խաչը), որը հաստատում է Անապատում: Ի հիշատակ Վարագավանքի, Անապատը վերանվանվում է Նոր Վարագավանք:

Հուշարձանախումբը բաղկացած է Ս. Նշան և Ս. Աստվածածին եկեղեցիներից, երկու գավաթներից, կրկնահարկ տապանատներից և մատուռից:

Ս. Նշան եկեղեցին գտնվում է համալիրի հարավ-արևելյան մասում: Հուշարձանախմբի վաղագույն շինությունն է: Կառուցել է Կյուրիկե Բ-ի թոռ, Վասակ Ա-ի որդի Դավիթ Բագրատունին 1198 թ.:

Երկխորան հորինվածքով փոքրաթիվ եկեղեցիներից է: Այն եղել է թաղական երկուսուսուցի տանիքով, որոնք այժմ քանդված են: Արևմտյան շքամուտքի աջ և ձախ կողմերում ազուցված են նուրբ կիսաշրջանային անցումներով երկու շքեղազարդ խաչքար: Խորանները լուսավորվում են արևելյան ճակատից բացվող մեկական պատուհաններով, որոնք պսակված են ընդհանուր գոտիով: Վերջինից վերև անցնում է կենդանիների պատկերաքանդակներից և բուսաներկաչափական զարդամուտիվներից կազմավորված քանդակաշարք:

Կրկնհարկ տապանատունը կցված է Ս. Նշան եկեղեցու հյուսիսային ճակատին: Այն կառուցվել է 1200 թ., նույն



Ս. Նշան եկեղեցու արևմտյան ճակատի հարավակողմյան խաչքար



Մատուռ, տեմք հարավ-արևմուտքից

շատված ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան շքամուտքից



Դավիթ իշխանի կողմից, որպես իր տոհմի դամբարան: Կառույցն անանձնահատուկ է իր ծավալատարածական հորինվածքով: Նրա առաջին հարկի ուղղանկյուն հատակագծով (3,50×2,30 մ), թաղակապ մատուռի վրա XIII դ. սկզբին ավելացվել է զանաձև, վեղարով ավարտվող մի ծավալ, որից պահպանվել են ստորին մի քանի շարքերը: Մուտքերը արևմտյան կողմից են: Առաջին հարկաբաժնի թաղի համար հարավային կողմից որպես հենարան ծառայում է 1 մ բացվածքով կամարը, որը կցված լինելով Ս. Նշան եկեղեցուն, առաջացնում է խորշ:

Կրկնաճաղկ մատուռ կից է Ս. Նշան եկեղեցուն հարավային կողմից: Կառուցվել է XIII դ. սկզբին: Ունի հատակագծային և ծավալատարածական նույն հորինվածքը, ինչ որ տապանատունը (մատուռն ավելի ընդարձակ է՝ 4,50×3,20 մ):

Ենթադրվում է, որ ինչպես տապանատան, այնպես էլ մատուռի վերնահարկերը ծառայել են որպես ավանդատներ Ս. Նշան եկեղեցու համար: Այնտեղ բարձրացել են շարժական սանդուղքների միջոցով:

Ս. Նշան եկեղեցու արևմտյան ճակատ



Փոքր գավթի արևմտյան պատի ներքին տեսք

Ս. Աստվածածին եկեղեցին համալիրի գլխավոր շինությունն է: Արձանագրությունների և XIII դ. պատմիչ Կիրակոս Գանձակեցու հաղորդած տեղեկության համաձայն այն կառուցվել է 1224—1237 թթ.՝ Դավիթ որդի Վասակ Բ-ի կողմից, իսկ օծումը տեղի է ունեցել 1240 թ.: Ճարտարապետն է անեցի Գազանը: Եկեղեցին արտաբուստ ուղղանկյուն (10,25×15,40 մ), ներքուստ խաչաձև հատակագծով գմբեթավոր զահլիճ է: Չորս անկյուններում գտնվում են կրկնահարկ ավանդատներ, որոնցից արևմտյան զույգի երկրորդ հարկերը բարձրանում են շթարարի մշակույթներ ունեցող բարձակային աստիճաններով: Եկեղեցին ունի երկու շքամուտք՝ արևմտյան և հարավային կողմերից: Արևմտյանն առանձնանում է ճոխ ճարտարապետական հարդարանքով, որում աչքի են ընկնում գունավոր և ձևավոր քարերի համադրամամբ քանդակները:

Փոքր գավթի կից է գլխավոր եկեղեցու հարավային ճակատին և իր մեջ ներառում է Անապատի եռակառույց համալիրը (հուշարձանախմբի սկզբնական կառույցները): Կառուցվել է XIII դ. երկրորդ քառորդում: Ուղղանկյուն հատակագծով (8,0×11,0), երկու սյուններով իրականացված կառույց է եղել, որից պահպանվել են արևմտյան պատը և նրան հարող երդիկի ստորին քանդակազարդ քիվի մի մասը:

Մեծ գավթի գտնվում է գլխավոր եկեղեցու արևմտյան կողմում: Հյուսիսային և մասամբ արևմտյան ճակատներով հարում է ժայռերին: Կառուցվել է փոքր գավթից հետո՝ XIII դ. կեսերին: Հատակագծում քառակուսի է (մոտ 14×14 մ), որի ծածկն իրականացված է եղել առանց սյուների՝ խաչաձևվող զույգ կամարների օգնությամբ: Գավթին ունի երկու մուտք՝ հարավային և արևելյան ճակատներից:



Ս. Ասովածածին Եկեղեցու արևմտյան շխմուտքի մանրամասն

Քարտաշյան Հրաչյա Կամոյի

ՆՈՐ ՎԱՐԱԳԱՎԱՆՔ

Մասն. խմբագիր՝ Գ. Ս. Շախկյան
Խմբագիր՝ Ս. Վ. Ստեփանյան
Նկարիչ՝ Ս. Ս. Մկրտչյան
Տեխն. խմբագիր՝ Ա. Գ. Ասրյան
Վերստուգող սրբագրիչ՝ Գ. Հ. Վազարյան

(արևելյան ճակատից մուտքի առկայությունը հազվագեղ սրինակ է):

Համալիրից ոչ հեռու՝ հարավ-արևմրտյան և հյուսիս-արևմտյան մասերում գտնվում են երկու մատուռ (XIII դ.): Հյուսիս-արևմտյանի շուրջը տարածված է հին գերեզմանոց: Հուշարձանախմբում պահպանվել են միջնադարյան խաչքարի: Ուշագրավ է մեծ զավթում տեղադրված մարդկանց պատկերաքանդակներով խաչքարը՝ կերտված 1620 թ. Վարդան կազմողի կողմից:

© 2002 պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության ընկերություն

Հանձնված է շարվածքի 21.07.1986 թ.:
Ստորագրված է տպագրության
14.07.1987 թ.: Տորմատ՝ 84×108¹/₃₂:
Քուղթ՝ «Կավճապատ», տպագր. 0,42
պայմ. մամ., հրատ.՝ 0,4 մամ.: Պատվեր
772: Տպաքանակ 10000: Գինը 15 կոպ. է
ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլի-
գրաֆիայի և գրքի առևտրի գործերի
պետական կոմիտեի № 2 տպարանի
մասնաճյուղ, Մարշալ Բաղրամյանի № 26: